600.0106.28.03.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2018 թվականի №106Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի №352Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՎԱՀԱՆ ՍԵՐՈԲՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի հուլիսի 3-ի №352Ա որոշմամբ «ՎԱՀԱՆ ՍԵՐՈԲՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0591 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 340 125 (երեք հարյուր քառասուն հազար հարյուր քսանհինգ) դրամ գումարի (հաշվարկված՝ 2011 թվականից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 30-ը) բռնագանձման վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2014 թվականի մարտի 12-ին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

դ) Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի №287Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2014 թվականի հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով

հաշվարկված 238 725 (երկու հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 25-ի №ԵԱՔԴ/0004/04/17 վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, և նույն դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի որոշմամբ Ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ,

զ) Ընկերության սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի մարտի 17-ի գրությամբ (Հանձնաժողովում մուտքագրվել է մարտի 19-ին) դիմել է Հանձնաժողով Ընկերությանը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 3-ի «ՎԱՀԱՆ ՍԵՐՈԲՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №352Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև 2018 թվականի մարտի 19-ը հաշվարկված 1 103 653 (մեկ միլիոն հարյուր երեք հազար հազար վեց հարյուր հիսուներեք) դրամ պարտքը, որից 742 778 (յոթ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր յոթանասունութ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 360 875 (երեք հարյուր վաթսուն հազար ութ հարյուր յոթանասունհինգ) դրամը՝ մինչև 2017 թվականի մայիսի 25-ը ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 19-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
28 մարտի 2018թ.